ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿՈՆՐԱԴ ՌԱՅԶԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 12 սեպտեմբերի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի հրավերով եռօրյա պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերը՝ ԵՀԽ Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու տիկ. Թենի Սիմոնյանի ընկերակցությամբ: Սա ԵՀԽ գլխավոր քարտուղարի երկրորդ այցն է Հայաստան:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ մեծարգո հյուրի հետ:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս կարևորում է էկումենիկ շարժումը, որին և միտված է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի գործունեությունը: Նորին Սրբությունը հավաստեց նաև, որ Հայ Առաքելական Եկեղեցին շարունակելու է իր նպաստը բերել ԵՀԽ առաքելությանը:

Իր հերթին դոկտոր Կ. Ռայզերը հավաստեց, որ ԵՀԽ-ն շարունակում է խորացնել փոխըմբռնման մթնոլորտը քրիստոնյա Եկեղեցիների միջև, քանի որ Քրիստոսի հավատքը բոլոր այդ Եկեղեցիներին դարձրել է նույն ընտանիքի անդամներ, որոնք օտար լինել միմյանց չեն կարող: Անդրադառնալով Հայ Առաքելական Եկեղեցուն, ԵՀԽ գլխավոր քարտուղարը նշեց, որ Հայ Եկեղեցին հատուկ տեղ ունի հին Եկեղեցիների կողքին ոչ միայն իր 1700-ամյա պատմությամբ, այլ նաև իր ուրույն նկարագրով:

Առիթից օգտվելով Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Կ. Ռայզերին մարդասիրական այն աջակցության համար, որ ցուցաբերում է ԵՀԽ-ն Հայաստանի ժողովրդին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գործող «Հայաստանյան կլոր սեղան» և ECLOF գրասենյակների միջոցով:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ԵՀԽ ներկա վիճակին ու զարգացումներին առնչվող հարցեր: Նորին Սրբությունն ու դոկտոր Կ. Ռայզերն անդրադարձան նաև օգոստոս ամսին Նյու Յորքում կայացած աշխարհի հոգևոր առաջնորդների գագաթնաժողովին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը և Արարատ-

յան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Հանդիպումից հետո Վեհափառ Հայրապետը և դոկտ. Կոնրադ Ռայզերը այցելեցին ՀՀ Ազգային ժողով և Սահմանադրական դատարան:

Սեպտեմբերի 13-ին Կ. Ռայզերի մասնակցությամբ նախատեսվում է էկումենիկ արարողություն Սպիտակի Ս. Հարություն նորակառույց եկեղեցում, որը 1988 թ. երկրաշարժից հետո ԵՀԽ-ի ներքո է աղետյալ քաղաքին: Սեպտեմբերի 14-ին Կ. Ռայզերը կայցելի նաև Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Նախատեսվում են այցելություններ նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ԵՀԽ «Հայաստանյան կլոր սեղան» և ECLOF գրասենյակներ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 13 սեպտեմբերի 2000 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդարանի Եվրամիություն-Հայաստան խորհրդարանական հանձնաժողովի անդամներին՝ Եվրախորհրդարանի Սահմանադրական հարցերի հանձնաժողովի նախագահ Ուրսուլա Շլայֆերի գլխավորությամբ:

ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանը Վեհափառ Հայրապետին ծանոթացրեց պատվիրակության հետ, որի կազմում էին հանձնաժողովի փոխատենապետ Ջիովանի Պիտելան և Հայաստանի հարցերով Եվրախորհրդարանի զեկուցող Պեռ Գարտոնը:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց, որ Հայաստանի անդամագրումը Եվրախորհրդարանին մոտենում է իր բարի ավարտին՝ միաժամանակ նշելով, որ անդամակցումը եվրոպական կառույցներին ժողովրդավարության և իրավական հիմքերի ամրապնդման երաշխավորը կարող է դառնալ: Վեհափառ Հայրապետը ուրախությամբ նշեց նաև եվրոպական պետությունների ջանքերը՝ ուղղված տարածաշրջանում խաղաղության և փոխըմբռնման մթնոլորտի ձևավորմանը:

Հյուրերի խնդրանքով Նորին Սրբությունն իր նկատառումները հայտնեց առկա իրավական դաշտում Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ՝ ցավով նշելով, որ հաճախ կրոնական շատ կազմակերպություններ ոտնահարում են երկրի իրավական ու բարոյական նորմերը: Վեհա-